Արձանագրություն N 3
ՄՄԾ ԳՀԽԾՁԲ-26/8 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

7 հունվարի 2026
ժամը 10:40

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Դավիթ Մելիքյանը
անդամներ՝ Արբակ Սանամյանը, Լուսինե Շարաֆյանը, Հասմիկ Ղուլյանը,
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր՝ հանձնաժողովի անդամ՝ Նարինե Մխիթարյանը:

I. Հայտի գնահատման արդյունքների մասին

(Դավիթ Մելիքյան)

1. Հրավերով սահմանված կարգով և ժամկետում «Բիոնկոդ» ՍՊ ընկերությունը հանձնաժողովին է ներկայացրել արձանագրված անհամապատասխանությունների և հրավերի 1-ին մասի 2.4.1 կետով նախատեսված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների գնահատման համար հայտով ներկայացրած փաստաթղթերի լրացված, փոփոխված տարբերակները:

1.1 Գնահատող հանձնաժողովի անդամներին են փոխանցվել մասնակցի կողմից հայտի գնահատման համար ներկայացված հրավերով սահմանված փաստաթղթերի լրացված, փոփոխված տարբերակները:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց «Բիոնկոդ» ՍՊ ընկերության հայտով ներկայացրած փաստաթղթերը, այդ թվում ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների գնահատման համար հրավերի 1-ին մասի 2.4.1 կետով նախատեսված փաստաթղթերը և արձանագրեց, որ

ա/ «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի գնահատման համար ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց «Բիոնկոդ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

II. Հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

(Դավիթ Մելիքյան)

3. Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների ոչ գնային պայմանների չափանիշները գնահատվել են հրավերով սահմանված կարգով:

Հանձնաժողովի անդամների կողմից մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները ներկայացված են գնահատման թերթիկներում:

Գնահատող հանձնաժողովի անդամների կողմից հայտի որակավորման չափանիշներին տրված գնահատականները հետևյալն են.

Գնահատման չափանիշը	Մասնակցի անվանումը և որակավորման չափանիշներին տրված գնահատականը
	«Բիոնկոդ» ՍՊԸ
1	2
ֆինանսական միջոցին տրվող միավորը (ՖՄՄ = ՆԳ x 30/ԳԳ)	30
Մասնագիտական փորձառություն, նախկինում կատարած աշխատանք ՄՓՄ	35

Աշխատանքային ռեսուրսներ ԱՌՄ	35
Ընդհանուր գնահատականը (ՄՓՄ + ԱՌՄ + ՖՄՄ)	100

Գնահատող հանձնաժողովը գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը հաշվարկել է հրավերով սահմանված բանաձևով՝ ՄՓՄ=ՄՓԳ x 35/ՄՓԱ, ԱՌՄ=ԱՌԳ x 35/ԱՌԱ մասնակցի որակավորման հատկանիշներին /Մասնագիտական փորձառություն/ և /Աշխատանքային ռեսուրսներ/ չափանիշներին տրված միավորն է:

Ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականների հանրագումարն (ՄՓՄ + ԱՌՄ + ՖՄՄ) ամենաբարձրն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկների և հայտի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակից ճանաչել «Բիոնկոդ» ՍՊ ընկերությանը:

Ընտրված մասնակից է ճանաչվել այն խորհրդատուին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և հրավերով սահմանված ոչ գնային պայմաններին հրավերով սահմանված կարգով տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Դավիթ Մելիքյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով սահմանված կարգով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով սահմանված պայմաններով՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Դավիթ Մելիքյան

անդամներ՝ _____ Արբակ Սանամյան

_____ Լուսինե Շարաֆյան

_____ Հասմիկ Ղուլյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան